Ա.ՀԱՄԲԱՐՅԱՆ, Ս.ՍՏԵՓԱՆՅԱՆ, Հայոց ցեղասպանությունը
Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1995, 70 էջ

Գրքույկում շարադրված է Մեծ եղեռնի համառոտ պատմությունը, որը պետական քաղաքականության մակարդակի հասցրեց Աբդուլ Համիդ 2-րդը, հիմնականում իրագործեցին երիտթուրքերը և ավարտեցին քեմալականները: Հեղինակները բացահայտել են ցեղասպանության պատճառները, իրականացման եղանակներն ու հետևանքները: Համառոտակի ներկայացված են նաև ինքնապաշտպանական գոյամարտերը:

Գրքույկի առաջին՝ «Ի՞նչ է ցեղասպանությունը» դրվագում հեղինակները տվել են ցեղասպանության հասկացության բացատրությունը հենվելով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1946թ. դեկտեմբերի 11-ին ընդունված բանաձևի, 1948թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Կոնվենցիայի», Նյուրնբերգյան միջազգային ռազմական դատարանի, Տոկիոյի դատավարությունների ընդունած որոշումների վրա:

Ըստ այս փաստաթղթերի «Ցեղասպանության երևույթը բնորոշվում է որևէ ազգի, էթնիկական կամ կրոնական խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման նկատառումով կատարվող բոլոր գործողություններով»:

Ապա թվարկված են պատժելի համարվող գործողությունները:

«Ցեղասպանությունը ոչ միայն ֆիզիկական բնաջնջում է, այլ նաև ազգային լեզվի ու մշակույթի ոչնչացում»:

«Գոյություն ունի և կենսաբանական ցեղասպանություն, որը տարբեր միջոցներով ու մեթոդներով արգելակում է ազգերի և ազգային խմբերի բնական աճը»:

Հիշատակված է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1968 թ. նոյեմբերի 26-ի ընդունած «Ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության մասին կոնվենցիան», ուր, մասնավորապես, նշվում է, որ «ցեղասպանության համար վաղեմությունը չկիրառելու մասին կոնվենցիան ունի հետադարձ ուժ»:

«Նման հանցագործություններ կատարած պետությունները, ՄԱԿ-ի կանոնադրությամբ և ընդունած համաձայնագրերով, ենթարկվում են նյութական, քաղաքական ու բարոյական, իսկ մեղավոր անձինք՝ քրեական պատասխանատվության»:

Հեղինակերը տվել են և «Հայասպանություն (Արմենոցիդ)» հասկացության բնորոշումը: «Արմենոցիդ» տերմինը միջազգային շրջանակներում առաջին անգամ շրջանառության մեջ է մտել 1967թ. հուլիսին Փարիզում կայացած ցեղասպանության կանխարգելակման համաշխարհային 2-րդ համաժողովում: Հեղինակերը նշում են, որ Հայոց ցեղասպանության մտայնությունը դարերի պատմություն ունի, դեռ այն ժամանակներից սկսած, «երբ թուրքական ցեղերը Հեռավոր Արևելքից և Միջին Ասիայից ներխուժել են Հայաստան ու Փոքր Ասիա: Օսմանյան կայսրության կազմավորման ժամանակ այդ բռնապետության կառավարողները տարածքաշրջանի ժողովուրդներին բաժանեցին երկու մասի՝ «հավատացյալների» (մահմեդականների) և «գյավուրների» (անհավատների կամ այլակրոնների)»:

Հայերի զանգվածային կոտորածների քաղաքականությունը, ինչպես նշում են հեղինակերը, պետական մակարդակի է բարձրացվել Աբդուլ Համիդի տիրակալության տարիներին: Այդ քաղաքականությունը ժառանգեցին երիտթուրքերը և հրեշավոր միջոցներով իրականացրեցին 1915-ի ցեղասպանությունը:

«Երեխաների ճակատներին մեխ են խփել, - գրել է Հովհաննես Թումանյանը, - կենդանի մարդկանց զանազան մասերը կտրատել են, զանազան կերպ դասավորել, խաղեր են արել, մինչև կեսը դրել են պղնձի մեջ և կեսից ներքև եփել, որ մյուս մասը կենդանի տեսնի ու զգա, շիկացած երկաթներով կտրել են մարմնի զանազան տեղերը և կրակի վրա խորովել, կենդանի խորովել են: Ծնողների աչքի առաջ երեխաներին կոտորել են, երեխաների աչքի առաջ՝ ծնողներին»:

Թուրքիայում ամերիկյան դեսպան Հ.Մորգենթաուն գրել է. «Համոզված եմ, որ մարդկության ողջ պատմության մեջ չկան այնքան զարհուրելի փաստեր, որքան այդ կոտորածները: Անցյալում հայտնի մեծ ջար-

դերն ու սարսափները գրեթե աննշան են թվում 1915 թվականի հայ ազգի կրած տառապանքների համեմատությամբ»:

Գրքույկում ընդարձակ դրվագ է նվիրված ինքնապաշտպանական գոյամարտերին՝ Վանում, Շատախ, Գավաշ, Թիմար, Հայոց ձոր, Արճեշ գավառներում, Սասունում, Շապին-Գարահիսարում, Ուրֆայում, Մուսա լեռում և այլուր: Հանգամանորեն նկարագրված են Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի մարտերը: Հիշատակված են նաև Կիլիկիայի տարբեր տարածքներում մղված գոյամարտերը:

Հեղինակներն անդրադարձել են նաև ցեղասպանության հետևանքներին: Հայ ժողովուրդը զրկվեց իր հայրենի տարածքների 90 տոկոսից, ունեցավ նյութական ու մարդկային հսկայական կորուստներ, կործանվեցին բազում ճարտարապետական, մշակութային կոթողներ, ոչնչացվեցին ձեռագրերը, հայ ժողովուրդը կորցրեց իր թվաքանակի 1/3-ը, և սա այն դեպքում, երբ պատերազմող երկրները՝ Գերմանիան, Ֆրանսիան, Անգլիան կորցրին 1-8 տոկոսը միայն:

Ցեղասպանության հետևանքների նշանակալից երևույթը եղավ Սփյուռքի գոյացումը, որը հղի է ուծացման վտանգով: Սակայն հայ ժողովրդի պահանջատիրությունը մնաց, և նրա պայքարը շարունակվեց զանազան եղանակներով, որոնցից մեկն էլ հայ վրիժառուների ահաբեկչական գործողություններն էին:

Խոսվում է Թուրքիայի մի քանի քաղաքներում 1919թ. կազմակերպված դատավարությունների մասին, որոնց նպատակն էր փրկել Թուրքիայի պատիվը: Սակայն շատ շուտով քեմալականները կազմակերպեցին հայերի նոր ջարդեր Կիլիկիայում, Զմյուռնիայում, Արևելյան Հայաստանում: Հեղինակներն անդրադարձել են նաև մեծ տերությունների դիրքորոշմանը և հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրին: Այդ դիրքորոշումը բնութագրված է որպես թուրքական կառավարողների գործողությունների թողտվության և չմիջամտելու քաղաքականություն: Բերված է Յո.Լեփսիուսի խոսքերը. «Հայկական հարցը բնածին տունկ չէ: Այն եվրոպական դիվանագիտության պտուղն է... դիվանագիտական շախմատային խաղում... Հայը հանդիսացել է զինվոր, որին մերթ առաջ են մղել,մերթ զոհաբերել: Մարդասիրության պատճառաբանություններն ու «քրիստոնեական հովանավորությունը» միայն դիմակ էին»:

«Բոլոր տերություններից հայերի ցեղասպանության գլխավոր մեղսակիցը կայզերական Գերմանիան էր», - գրում են հեղինակները: Վկա-

յակոչված է այն տարիներին Գերմանիայի արտաքին գործոց նախարար Ա. Ցիմմերմանի հետևյալ հայտարարությունը. «Ըստ էության, հայերը պետք չեն Գերմանիային: Հայերով բնակեցված Հայաստանը վնասաբեր է նրա շահերին»: Գերմանացիների ոճրագործ հովանավորության մասին բերված են հատվածներ ակադեմիկոս Ե.Տարլեի գրքերից և Անգլիայի վարչապետ Լլոյդ Ջորջի հուշագրություններից: Հեղինակները փաստագրությամբ հաստատում են նաև Անգլիայի ու Ֆրանսիայի քար անտարբերությունը հայերի ողբերգության հանդեպ, իսկ ԱՄՆ-ն մնաց սոսկ դիտողի դերում:

Անդրադառնալով հայկական ցեղասպանության ճանաչման խնդրին, հեղինակները թվարկում են միջազգային ատյանների քննարկումները և որոշումները, սկսած Սևրի պայմանագրից մինչև մեր օրերը: Առաջին դրվագով տրված է Հայոց ցեղասպանության պատմագրությունը: Հիշատակված են հայ և օտարազգի պատմաբանների աշխատությունները, որոնք հաստատում են ցեղասպանության փաստը: Նշված են թուրք և Եվրոպայի թրքամետ մի քանի պատմաբանների անունները, որոնք ջանք չեն խնայում ժխտելու հայկակա ցեղասպանությունը:

«Հայերը պահանջում են, որ մարդկությունը ընդունի իրենց ցեղասպանության փաստը և դատապարտի թուրքերի աննախադեպ ոճիրը» - այսպիսին է հեղինակների եզրակացությունը:

Հ.ԻՆՃԻԿՅԱՆ, Սոցիալական հոգեբանությունը և ցեղասպանությունը. Երևան, «Հայգիտակ» հրատ., 1995, 102 էջ

Գրքի առաջաբանը գրել է պրոֆ. Պ.Հակոբյանը, ըստ արժանվույն գնահատելով հեղինակի ծառայությունը մեր պատմագրությանը, մասնավորաբար ցեղասպանության հետ առնչվող պատմական, քաղաքական, կրոնական, ազգային, սոցիալ-հոգեբանական գործոնները լուսաբանելու խնդրում:

Հ.Ինճիկյանը բացատրում է իր այս աշխատությու-